

# Երեւան



7

(190)  
Հունիս, 2022



## «ՀԱՆՈՒՆ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՊԱՏՎԻ»

Հունիսի 28-ին Երևանի մարզային գրադարանում տեղի ունեցավ արշավագիր Արմենի «Հանուն պատվոյի պարտի» երկհատորյակի շտրիմակերպ: Ենթակետեր, գիրական, գեղարվեստական վերլուծություններից կար, իրենց հիացումները հայրենեյին հային և հայրականը իր վեհությունը պատկերակարգության հասած արեղծագործության վերաբերյալ:

«...Գտել էի բոլոր բարդագույն հարցերի պատասխանը. այն բաղկացած էր մեկ բառից՝ Հայաստան: Հայաստան. ահա հանուն ինչի էին մարտնչում ազնավորները»:

Վեպի հերոսը անվեհեր ու իմաստուն պետական այր իշխան Սարգիս Զաքարյան երկայնաբազուկն է, 1185-ից վրաց գործերի հրամանատար ամիրսպասալար, մարդ, որը հայրենասիրական մեծ գործեր է կատարել թե՛ հայերի ու Հայաստանի, թե՛ Վրաստանի համար, և մարդ, որին հաջողվում է ամեն անգամ խույս տալ արյունահեղությունից, եղբայրասպանությունից. գորականի մտածելակերպ ու գործելակերպ: Ամեն ինչ հանուն երկրի բարօրություն, ինչը կարող է և կյանք արժենալ: Վեպում հաջորդիվ ցույց են տրվում հայրենասիրական արժանատիքները: Զաքարյան ազգանունը կրելը յուրաքանչյուրի համար միայն պատիվ է. առաջին տեղում տոհմի պատիվն է, և միայն այդ մտքից տոհմի բոլոր քառազույգների սիրտը «տաք գինու պես» ջերմանում է:

Մեղքերով բեռնված ծերունու հոգու թողություն ստանալու հանգամանքն է ներկայացվում, ինչի համար մեկ հոգևորականի «ուժը» սակավ ու տկար է թվում, և նրան լսում են հարազատ զավակները: Բազում ծանրածանր խոհերը գաղտնիքներով լեցուն, ծերունին մեկնում է նրանց առջև՝ այդուհետ վերջիններիս համար ևս բացելով խորհրդավոր ու անմեկնելի, սակայն իրական մի աշխարհ: Վեպի առաջին մասն ամբողջությամբ հյուսված է գրական այս հնարքի գործածությամբ, առկա է անընդհատ շարժում, իրադարձությունների զարգացման ընթացք, հետաքրքրությունը երբեք չի մարում. տարիների կենսափոփոխություն, ռազմական հետաքրքրություններով, պատերազմում թրծված, փիլիսոփայորեն հարստացած այրը ամբողջ մի պատմական ժամանակաշրջան՝ մոտ երեք տասնամյակների վաղեմությամբ, անցկացնում է սեփական

ներքին պիզմայով, «իր պատմության հերթական էջը շրջելով», դառնում է դաս առաջին հերթին իր զավակների, ապա և՛ սերունդների համար:

Գրիչ և սուր. «Հայը մի ձեռքին սուր, մյուսին՝ գրիչ պետք է ունենա, և միայն այդ դեպքում անպարտելի կլինի»: Ընդհանրապես, հետաքրքիր բնորոշումներ կան հային՝ «Եթե տեսնես հայը ծառ է տնկում, մոտեցիր, օգտակար եղիր նրան, տեսնես դաշտում է սրում, ընկեր եղիր նրան, տեսնես գլուխը քարին է խփում, կանգնիր կողքին, դու էլ գլուխդ խփիր, և բարին կլինի քեզ համար, քանզի հայը գիտի ինչ է անում»: Ուշագրավ է ինչպիսի նրբագծերով է ներկայացվում Հայոց աշխարհը, հայերենը, մարդկային կյանքի առաքինություններն ու մարդու անհատականությանը ձևավորված բարոյական արժեքները. «Հիրավի հայոց լեզուն ստեղծված է Աստծո հետ խոսելու համար»: Եվ անկախ իրադարձությունների խառնափնթոր վիճակից՝ անշուշտ առկա է հավատը հաղթանակի նկատմամբ. չէ՞ որ թիկունքին ունեն Աստծուն և ճշմարտությունը, այն, ինչը ձգտում է բացարձակության բոլոր ժամանակների համար: Ուստի և անդադար «Հայր մեր»-ը շնչալը, Աստվածաշնչից մեջբերումներ անելը խորին հավատն առ Աստված, դեպի ճշմարտության և արդարության անկասելի հաղթանակը գրքում ընդգծվող փաստերից են: Ընդհանրապես բազմաթիվ են խոհերը հայ ժողովրդի, նրա, որպես առաքելության հավիտենական կյանքի մասին, այդպես և ընտանիքը՝ որպես մեծագույն արժեք հայի համար, հայկական տոհմիկ ընտանիքների բնորոշ մի շարք մտքերը, ընդամենը՝ Զաքարյանների ընտանեկան ավանդական պատվիրանը. «Կարողացիր եղբորդ ընկերը դառնալ և արա այնպես, որ ընկերդ եղբայր դառնա քեզ», զավակի և ամեն հաջորդ սերնդի առիքնող վերաբերմունքը առ

ընտանեկան ավանդույթները, հպարտությունը դրանցով: Ընտանիքի, կնոջ նկատմամբ այրական սիրո դրսևորման արտահայտություն, որ ընդամենը մեկ նախադասությամբ է. «Այսօրվա ծիծաղը շատ թանկ արժի»: Մյուս կողմից՝ մայրապաշտության, կնոջ նկատմամբ սիրո ինքնատեսակ դրսևորման ակնատեսն ենք դառնում գրքի էջերում կինը՝ որպես մայր, որպես զավակների պահպան հրեշտակ, սերունդներ կրթող ու դաստիարակող: Նաև՝ անհրաժեշտաբար և տեղին անդրադարձ հայկական խոհանոցին, ժամանակի արքայական ուտեստներին, անգամ՝ մակերեսորեն՝ դրանք պատրաստման ընթացքին կրթադաստիարակչական ավանդույթները պահպանելու անբաբույց միտումով:

Ձուգահեռ մարտական պատրաստվածության, պատերազմելու արվեստի մանրամասներին հեղինակի՝ տիրապետելու բազմաթիվ վկայություններ կան գրքում: Իսկ ժամանակ առ ժամանակ վիպական խոսքը ընդմիջարկվում է գրողի աֆորիստիկ արժեք ունեցող մտքերով: Ինչպես՝ «Ամեն կենդանի արարած, և մարդն այդ թվում, գիտի, որ իր տոհմի շարունակությունը կախված է նրանից, թե ինքը կկարողանա՞ կերակրել իր սերունդը, թե՞ ոչ», «Ցանկացած դիմակայության մեջ հաղթում է նա, ով լեզու է գտնում բարեկամների հետ, հետևաբար կարողանում է ավելի ուժեղ խփել թշնամիներին», «Միտքը մարդու ամենաուժեղ գեղեցիկ է», «Սերը արարում է», «Առաջնորդը տարիքով մեծը չի, այլ նա, ով ուժեղ, խելացի ու հաջողակ է մյուսներից» և այլն:

Վեպում բնապատկերները մեծածավալ չեն, ընդամենը մեկերկու նախադասություն, լիովին ընկալելի են, պահին համարժեք և հոգեվիճակին համահունչ, ի դեպ՝ առավել հաճախ՝ ի նպաստ դեպքերի զարգացմանը, ինչպես՝ «Լուսինը, ասես նրանց հետ պայմանավորված, թաքն-

վեց ամպերի տակ». բնության նախապատրաստումը հաղթանակին կամ նպաստավոր պայմանները. «Դրսում ակնակիր խավար էր. երկինքը պատված էր հսկա ամպերով, լուսնալույսի ոչ մի շող չէր թափանցում ամպերի միջով»: «Բլուրների վրա լռություն կախվեց», «Խելագար քամին հանգիստ չէր տալիս Տաշիրի լեռներին»՝ պատկերավոր, տեսանելի, շոշափելիության հասնող իրական, «Միջօրեի ամառային արևը խարկում էր», «...Ցուրտ արև, պաղ քամի...» և այլն: Նույն սկզբունքով հերոսների արտաքինի և ասպագենի նկարագրությունն է՝ կրկին միտված ամբողջական տեղեկություն հաղորդելու՝ կարճառոտ, առանց ավելորդությունների: Այստեղ հարկ է առանձնացնել մեփեթ թամարի կերպարի և Ջարիմեի մասին տողերը՝ սեղմ, բայց ամբողջական: Ընդամենը՝ այդպիսին են թե՛ սեփական, թե՛ թշնամու մասին բոլոր նկարագրությունները՝ համապարփակ, խիստ չափավոր: Մյուս կողմից՝ մարտի, խնջույթների, երկրաշարժի, եկեղեցական ժողովի նկարագրությունները բավական ծավալուն են, հագեցած: Ընդ որում՝ զարմանալի ռեալիստական պատկերներով են նկարագրվում ճակատամարտերը, մարտերն ու ընդհանրապես սպանությունների տեսարանները:

Ժամանակի բոլոր՝ լաբիրինթոսներով հագեցած՝ դավաճանությունից մինչև սեր ու ամուսնություն, կամք, Աստծո մտքի անքննելի ուղիներ, բանականություն, հաղթանակներ ու հավատ առ այդ ամենը. չէ՞ որ ի վերջո «և՛ եկեղեցուն աղոթող թամարը, և՛ Ջաքարեն՝ մարտի դաշտում, պաշտպանում են իրենց հավատն ու նախնիների հողը», իսկ «Հայաստանի իշխանաց իշխանի ուժը երկու բանի մեջ է եղբայրների հավատարմության և իր պատվի»: «Ես կպահեն խոստումս, ինչ էլ որ այն ինձ արժենա, քանզի ինձ համար ազնավորի պատվից թանկ ոչինչ չկա»:


Մի կողմից՝ գիտելիքի, կրթության կարևորությունը բոլոր ժամանակների համար՝ շնորհիվ կրթյալ մայրերի՝ իրենց բնորոշ ծնողական հոգատարությամբ և նրբանկատությամբ, մյուս կողմից՝ ընդհանրապես գիտելիքի նկատմամբ անհագ ծարավը՝ այս անգամ ի ծնե, կրկին բերում է ոգևորության՝ որպես ազնիվ առաքելության, միայն անպայման հիշելով՝ որ ժամանակաշրջանի մասին է խոսքը. չէ՞ որ «Տերը բանականությունն ու ազատ կամք է տվել, որպեսզի կարողանանք ճանաչել իր ստեղծած աշխարհը»՝ անկախ ժամանակից:

Երկրորդ գիրքը՝ «Վերածնունդ» ենթախորագրով, գալիս է ամբողջացնելու ժամանակաշրջանի տոհմի հայտնի ու անհայտ դեպքերի ու իրադարձությունների շղթան հաղթանակների բերկրանքի, պայքարի, հավատի ու սիրո վառ դրսևորումներով. հայրական պատգամը փոխանցվում է սերնդեսերունդ՝ պահել ազնավորի պատիվը, թույլ չտալ ամոթ բերել նախնիների տոհմանվանը:

Հրաշալի մեկնությամբ՝ գավակը և հետայսու տոհմի բոլոր սերունդները հաջորդաբար շարունակում են հոր կիսատ թողած գործը՝ «Սրբազան Արարատ լեռան հայացքի ներքո երկվում են, որ սուրս հանգիստ չի առնի, մինչև օտար տիրապետությունից ազատագրված չլինեն Մեծ Հայաստանի բոլոր հողերը». ազդեցիկ է գործի վերջաբանը:

Հայոց պատմության 12-րդ դարը ներկայացված է ինքնատիպ բառամթերքով, յուրօրինակ մշակվածությամբ: Լեզուն պարզ է, անպաճույճ: Հենց միայն խորհրդանշական «ազնավոր» անվանումը արդեն իսկ խոսում է և՛ գրողի, և՛ թարգմանչի բառընտրության բացառիկ կարևոր ճիգերի մասին:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ



ԱՐԱ ԱՐԹՅԱՆ

ԲԱՆԱԿՆԵՐ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԶԱՐԿԱԴՐՎԱԾ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԻՄ ԿՐՈՆԸ

Վարսավիր ես- թող իմ բառը թող- նի մորուք, Զբեր կին ես- բառս մարդն է հարևանի, Փարավուն ես- քրմի դավ է, ոչ թե ստրուկ, Զարսնացու ես- նա՛ նշանի լուռ մատանի, Եթե մայր ես- իմ տողն է քո մեռած որդին, Թե՛ թմրամոլ- բառս մորՖու սու- սեր է ներգ.

Կատաղեք էլ՝ իմ տողերը դուք չեք ատի, Զարկադրված բերանացի պիտի անեք:

Ծովակալ ես- տողերս քեզ՝ կետի վտառ, Ռեժիսոր ես- արտիստուհու ծունկ է նա քեզ, Իմ տողը քեզ- չար ուսանող- դոկ- տոր՝ քավթառ, Քեզ, հարբեցող, անո՛ւշ լինի իմ տողը-կես, Ինքնասպա՛ն ես- արցունք- տո- ղըս՝ բարձր կաթի,

Ես համբուրում եմ բուրդիդ- ա՛վ էլ լինեք.

Կատաղեք էլ՝ իմ տողերը դուք չեք ատի, Զարկադրված բերանացի պիտի անեք:

Աստղագետ ես- թող իմ տողը երկինք նետվի, Շնչող էակ դառնա վերում, որ չլա- ցես, Կետորս-նավ ես- թող փոթորկի հետ փաթաթվի, Որ վտառի կապույտ կյանքը չհա- լածես. Թե՛ թայֆուն ես-եկ քեզ կնոջ անուն դնենք, Աղբաման ես- տողս պիտի քեզ դեն նետի.

Կատաղեք էլ՝ իմ տողերը դուք չեք ատի, Զարկադրված բերանացի պիտի անեք:

Ուրե՛ր Զ Իսկ թե հանկարծ հայիոյեք ինձ- չեմ նկատի, Մեկ է- բառիս իշաբեռը պիտի տանեք, Կատաղեք էլ՝ իմ տողերը դուք չեք ատի, Զարկադրված բերանացի պիտի անեք:

«ԿԵՐՊԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՇԱՐՔԻՑ

- 1. Եվ ինձ պիտի սխալներիս համար սիրեն ճանապարհներն այս աշխարհի կարճ ու երկար, Լռե՛ք, դռներ: Ձեր բանալին չունի ոչ ոք, Լռե՛ք, ինչպես հյուրանոցի գաղտ- նապահ գորգ, Մեզ նույն երկիրն են հասցնում թևեր ու խորք: Լռե՛ք, ինչպես տաք ծվի մեջ

կյանքն է լռում: Գարուններս ճերմակեցին, անունը քո Կամքի ծառի կեղևին են փորագրում: Այն գիշերվա լքված այգում լույս կար մահվան, Ուր ամեն քար իմ մեմ-մենակ դեմքն էր ջարդել, Ուր ամեն բառ իմ բերանն էր ընտրել սահման, Ամեն անձրև ճերմակ շապիկս էր կարկատել, Կույրաղիքի պես կտրեք ու նետեք ինձ դեն, Իմաստնության ատամ ունի տազնապն արդեն, Սաղարթն է վար նետել կեղծամն իր կանաչ, Ինձ խայթում էր կարիճակերպ մի ծաղիկ, Ինձ խեղդում էր օձագալար մի աստղիկ, Լոկ քամին էր քահանայի պես կանգնած: Տեսնելով, որ ես մահ չունեմ՝ նա գնաց, Որ աշխարհում այն, ինչ իմն է, գտնի քեզ, Իմ բիբերը կուշաթափվեն, թե գրկես, Դու հատակ ես ճահիճի, իսկ ես՝ հուր քնած, Անապատի անձրև ես իմ բաժակում, Թե հեռանամ ծովայինի պես թաքուն:

\*\*\* Լա գիտեր, որ թռչնոց բույն է բռունցքս փակ, Գիտեր, որ լոկ իմ թռչնակներն են անխանում, Գիտեր, որ այլք տեսնում են իմ ափը դատարկ, Եվ աչքերս ուրիշի դեմ չեն սա- վառնում: Գիտեր, որ լոկ ես եմ արթուն հույ- սի արյամբ, Սիրտս ճաքած նուռ էր՝ մանկան ատամներով, Արու ծայն է, որ կանչում է

գարնանն այրի, Զարսանյաց օր, որ խնձոր է խածում սիրով: Բիլիարդի վառ սեղանի պես դաշտն էր փռված, Ու ճեփ-ճերմակ գնդակներն են իմ մեջ ցրված:

\*\*\* Նռան հատեր, ո՛ւն արյանն եք սիրահարված, Ու ձեռքեր են աճում ժայռից՝ քեզ գրկելու, Բայց ինչո՞ւ է քեզ փետուրե մարմին տրված, Որ ճախրելով երկինք՝ ասես՝ դու չե՞ս գալու, Դու ծղրիդի ջութակ լսող աստղիկ դարձիր, Նրա երզը թող պատասխանն իր ունենա, Զարդագողը, որ կհասնի մինչ Կաթնօրի, Ազատության գրկում քնել կըկա- մենա: Եվ օրը, որ սարդոստայնի թել է անտես, Կդառնա կապ խոտերի ու աստղի միջև, Եվ միայն ես պիտի մնամ հանդի- սատես Ու վայելեմ հրաշքը այդ այնքան, մինչև Երկնային բուժքույրերը ինձ քուն բերեն, Եվ երգերս իմ սխալներն ընդմիշտ ներեն:

ԱՆԴՐՇԻՐԻՄՅԱՆ Այր: Կգա օրը: Եվ վերջին անգամ կլինես թախծոտ, Եվ նա կթակի քո մեխված դուռը բարեկամի պես, Այնժամ կկանգնես դու տանդ կողքով հոսող ճանապարհին (Իսկ ճանապարհը տան շեմից անդին է միշտ էլ սկսվում) Ու կսկսես քայլել դու առաջին իսկ թռչնի երգի հետքով, Իսկ երբ թռչունը կլռի,

ականջդ կդնես հողին Ու կլսես ծաղկանց ծլարձակման ձայնը: Դու կլսես՝ ինչպես է տառապում ընդերկրյա ջուրը բանաված, Ու դեռ չհանգած հրաբուխների ժայթույն լռությունը կլսես, Դու կլսես նաև աղերսանքը օվկիանոսի ափին Կեր խոյացած մեծավորիկ ժայռի, որի ձեռքերը Մխրճված էին իր իսկ քարե կողերում, Ու նա չկարողացավ փրկել իր գոհին: Զետո քեզ կայցելի նախնյացդ արձագանքը: Դու կլսես նետահար Արայի ճիչը աստրական դաշտից, Կլսես ողբերգն արալեզների, որ արքային թողած Իզուր ձգտում են կենդանի մարդկանց կենդանություն տալ Եվ տրոյական ծիու գաղտնիքից ընկրկող Ջարդվող միզակների զնգոցը կլսես: Դու կլսես մեռնող մայրամուտի տնքոց Եվ գարնան աշխարհ գալուն օգնող տատմայրերի Ուրախության խորշոմապատ ճիչը: Իսկ երբ բախող բերի, Եվ թռչունն իջնի ու քայլի հողին, դու կլսես՝ ինչպես է Ալիքվում կուրծքը հողի, ինչպես մի ոստնող հովազի իրան երկնային հուզմունքից: Այնժամ կհասկանաս, Թե ինչու ես քայլել դեպի հավերժը. այնժամ կհասկանաս, Թե ինչու է լույս բարձրանում հողից Եվ ինչու է զուր աստղերի հույսը, Որոնք տեսնում են թաղվել մարդկանց հետ:

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԿՈՒՂՈՒՄ

-Մեկին էլ տարան,- շշմջաց Մեծը: -Տեսնես հաջորդն ո՛վ է,- խորը հոգոց հանելով՝ ասաց սարդերի թագավորության ամենակրտսեր ներկայացուցիչը: -Սարդո՛ւկ, քնելու ժամն է, բավա- կան է բլբլաս,- զգուշացրեց սարդ մայրիկն ու փոքրիկին տարավ իրենց բույնը: -Մտնենում են այն դաժան օրե- ռը... -Լա՛վ, Մեծ սարդ, ի՞նչ ես հիմիկ- վանից բողոքում, ծնունդ գալուն դեռ շատ կա, մեր ընկերները մեզ հետ են, նայի՛ր, անուշ-անուշ քնած են,- միջամտեց կավե Կճու- ճը: -Կճուճ քույրիկ, պատկերացրու, թե որքան կարտասափ որդեկո- րույս Դեղձը, երբ արթնանա ու տեսնի, որ իր մուրաբաներից մե- կին էլի տարել են: -Հա՛, ճիշտ ես, սարդ եղբայր, այս շաբաթվա մեջ արդեն երկ- րորդ կորուստն է: -Քեզ ի՞նչ կա, Կճուճ քույրիկ. քո փորը, որ միշտ լիքն է ճերմակ ու թել-թել պանիրներով, քեզ երբեք չի արգելի վայելել մայրական բերկրանքը: -Այդ քեզ է այդպես թվում: Իմ պանիրիկները շուտով կկանաչեն,

և ես ստիպված կլինեմ նրանց հրաժեշտ տալ: Տանտերը թարմ կանաչու հետ նրանց հացի մեջ կփաթաթի ու մի պատառով... վերջ նրանց կյանքին: Իսկ ես ստիպված կսպասեմ գարնա- նը, որ ներսումս էլի պանիրիկներ խլրտան: Մութ նկուղում կանգ առած օղը շաղախվել էր փոքրիկ անցքից ներս թափանցած լույսով: Մեկը խուլ հառաչում էր: -Իմ լավ հարևանուհի, գուցե խո- սե՞ս հետս, կթեթևանաս,- փորձեց օգնել Բալի կոմպոտը Դեղձի կոմ- պոտին: Դեղձը լուռ էր. նրա ապակե մար- մինը քրտնել էր: -Մենք ձեզ կուրախացնենք,- հայ- տարարեցին դատարկ անոթներն ու բարձրաձայն զրնգացին: -Լսի՛ր, ինչպիսի՛ հիանալի ծայն,- ասաց Կճուճն ու զմայլված փա- կեց աչքերը՝ վայելելով դատարկ անոթների զրնգոցը: -Շուտով այս երգչախմբին կմիանա ևս մեկը՝ մեր փոքրիկ Դեղձի մուրաբան: -Ա՛խ, սիրելիս, մի՞թե մի օր մեզ էլ են բաժանելու,- հառաչեց Ծի- րանի կոմպոտն ու հավեց ամուս- նուն՝ Ծիրանենիների տոհմին պատկանող թանձր հյուսիս, որը մի խստաբարո տղամարդ էր: Լա հոնքերը բարձրացրեց ու թավ ծայնով ասաց. -Այ կին, բավական է, վատ բանե- րից խոսես, ավելի լավ է՝ մեր երե- խաներին փայփայես: Ծիրանի կոմպոտը կանացի մեղ-

մությամբ նայեց իր մարմնում ապրող հատիկներին և հպարտո- րեն զլուխը վեր պարզեց: Ոչ ոք չիմացավ ինչպես կառուց- վեց նկուղային կյանքը: Տարիներ առաջ էր, երբ տանտերը ներք- նահարկում տախտակներ ձգեց, իսկ տանտիրուհին մեծ եռանդով պահածոները կարգով շարեց նո- րաչեն դարակներին: Պատահեց այնպես, որ պահածոները մտեր- մացան, բարեկամացան, դեղ- ձից պատրաստած պահածոներն ընտանիք կազմեցին, Ծիրանի հյուսիսն ու կոմպոտն ամուսնացան, Զարդի ու Մորու մուրաբանե- րը քույրեր դարձան: Սկզբում վե- ճի ալիք բարձրացավ նկուղում: Քաղցրահամները թթուների հետ չէին շփվում: Սակայն ամեն բան ժամանակի ընթացքում տեղն ըն- կավ, ավելի ճիշտ՝ նրանց շարքե- րը համալրեց պատկառելի տարի- քով կավե Կճուճը, որը հոգատար մոր պես կարողանում էր հարթել ամեն մի անախտություն: Ամեն անգամ, երբ բացվում էր նկուղի փայտե դուռը, և երևում էր տանտերերից որևէ մեկը, պահա- ծոները վախից դողում էին. տես- նես հիմա՞ ում են տանելու: Նրանք ցավով էին ընդունում ըն- տանիքի անդամներից որևէ մեկի կորուստը. հրաժեշտ էին տալիս, իսկ մի քանի օր անց ընդունում նրանց՝ որպես բարի հոգի՝ հույ- սով, որ հաջորդ տարի լցվելու է ինչ-որ հյուսիսով կամ մուրաբայով: Ուշ գիշեր էր: Մորու մուրաբան անընդհատ հագում էր, փռշտում,

իսկ քույրը՝ Զաղարջը, սփոփում էր նրան: -Ի՛, էս ա-աղջիկն էլ մ-միշտ հի- վանդ է,- կակազեց հարևանութ- յամբ ապրող ծեր առնետը: -Ի՞նչ է, ծերունկ, ի՞նչ ես մռթմռթում,- քնից արթնանալով՝ ծայն տվեց Կճուճը: -Վա՛, փոքրիկ Մորի, քեզ ի՞նչ է պատահել: Այդ պահին ոտնաձայներ լսվե- ցին: Հիվանդ Մորին խեղճ-խեղճ նայեց Կճուճին: -Աչքիս պառավն է գալիս, -ասաց Վարունգի մարմնադը: Այդ խոսքերի վրա բացվեց նկուղի դուռն ու պահածոների արարի- չը ոտքը դրեց աստիճանի վրա: Ծերացած փայտը խուլ տնքած տանտիրուհու ծանրությունից: Մորին փռշտաց: -Եղբանն էլ ճիշտ,- շշմջաց Կճու- ճը: Պառավ տանտիրուհին կամա- ցուկ առաջ գնաց, մոտեցավ թթուներից, բայց շրջանցելով նրանց՝ տնտղող հայացքը հատեց կոմպոտներին, ապա կանգ առավ մուրաբաների վրա: -Ո՛ւր ես, Մորի, մի՞թե այս տարի դրանից չեմ պատրաստել: Ահա թե որտեղ ես: Մեկն է մնացել: Տա- նեմ, տանեմ... Դավիթիկս հիվանդ է, թեյ խմի, շուտ լավանա: Այդ խոսքերի հետ նա մատների ծայրով բռնեց խեղճուկրակ Մորու պարանոցից, որն իր փռշտոցով էլ հաստատել էր վերջինիս հայտն- վելը: Մորին աչքերը լցրեց... -Զաղարջ, հանգստացիր, բուրոս





-Իջիր, ես տամ, ես Մորու մուրաբայով թեյն էլ Դավիթս չխմեց, թե համը լավը չէ, մտածեցի՝ թթվել է, թափեցի գնաց:  
Քույր Զաղարջը անզորությունից քիչ մնաց ճաքեր:  
Ծերունու հեռանալուց հետո նրանք ընդունեցին իրենց բարի ոգիներին, լսեցին նոր անդամներով համալրված երգչախմբին ու միմյանց գլուխ հավաքվելով, ասացին:  
-Պետք է գործել, մի բան մտածեք: Անկյունից դուրս եկան սարդերն ու Մեծը հայտարարեց:  
-Բարեկամներ, գործելը մեր գործն է, դուք հանգիստ եղեք, մենք ամեն բան մտածել ենք:  
Նկուղի բնակիչները երկու օր է, քուն ու դադար չունեին: Առավոտ էր. օրը կիրակի: Երես առած Դավիթիկը ոտքը դրեց նկուղ ու ինքն իրեն փսփսաց:  
-Նկուղում թաքնվեմ, տատս ինձ չի գտնի, կանհանգստանա, հե-

տո որ դուրս գամ, ուրախությունից ինձ համար ինչ ուզեմ կզնի: Ի՞նչ մութ է, լուսը որտեղի՞ց է վառվում: Նա վառեց նկուղային դեղնավուն լույսն ու... վախից սփթթեց, սարսափած դուրս թռավ այնտեղից:  
-Տա՛տ, տա՛տ:  
-Ի՞նչ է եղել:  
-Նկուղում...  
-Ի՞նչ կա նկուղում, հապա տեսնեմ:  
Տատը վերևից նայեց ու քարացավ:  
-Այս ինչպե՞ս:  
Նա նույնպես սարսափեց, փակեց դուռն ու էլ ոտք չդրեց այնտեղ:  
-Մենք թշնամուն հաղթեցի՞նք, ծվծվաց Սարդուկն ու ծիծաղեց: Ծիծաղեցին բոլորը: Սարդերի թագավորության ծրագիրն իրականացվեց: Նրանք մի քանի օր շարունակ պատրաստվել էին: Սարդերը, մի բռունցք դարձած, ամբողջովին փակել էին տախ-

տակներն ու պահածոները իրենց հյուսած առեղի սարդոստայնով, հետո էլ հերթով շարվել էին վրան: Նույնիսկ Սարդուկն էր մասնակցել:  
Դետո այդ տեսարանը ծերուկ տանտերն էր տեսել, բայց ոչինչ չէր արել՝ մտածելով, որ այդ ամենը կամ խոնավությունից է, կամ էլ Աստծո կողմից ուղարկված նշան, ո՞վ գիտի:  
Տարիներ են անցել: Նկուղը տեղում է, այնտեղ ապրողները նույնպես, միայն տանտերերը չկան, ապրում են իրենց գավակների մոտ: Դատարկություն էր տիրում ամենուր՝ տանը, նկուղում: Մայր Կոնստանտինը, որոնք արդեն շատ էին կանաչել, իսկ անոթները... Նկուղում համատարած լսվում էր դատարկ անոթների քաղցրահունչ մեղեդին՝ համատեղված պանրի տհաճ հոտին...



**ՀԱԶՐԵՎԱՐԴԻ ՊԵՍ ԲՈՒՐՈՂ**

Գոհար Եղիազարյանի բանավեստի զարկերակը մայրերգությունն է, որի պոետիկայի առանցքում երազը-պատրանքը-տեսիլը անվերջ շրջանաձևով մտահղացքային բաղադրիչներ են: Իր ապրում-պատկերները բանաստեղծության վարչամակն հյուսում է մոր՝ հագրեվարդի պես բուրող խաս մատերի ասեղնագործ ու նրբին հայեցումով:  
Դեռևս առաջին «Քանի ուշ է, ասեմ» բանաստեղծությունների ժողովածուում (Երևան, «Արմավ» հրատ., 2018թ.) հեղինակը մոր կերպարի անվերջ թրթռումներով, դեպի «ներս հոսող տաք արցունքներով», «հուշերի հետ քարկտիկ խաղալով» կարողանում է հասնել մոր համասփյուռ ներկայության, նրա սփոփաբեր գոյի առեղծվածին:  
Գոհար Եղիազարյանը տիեզերքի համատրոփը «անուշ մարեի» շնչառությամբ զգացող բանաստեղծուհի է, ըստ որի կյանքում մայրը Աստծո ներկայության հնարավորությունն է որպես բանաստեղծություն: Այս ամենի գեղարվեստական հաստատումն է նաև «Կիսաճանապարհին» խորհրդանշական խորագրով նրա երկրորդ քերթվածների ժողովածուում:  
Այո՛, «Կիսաճանապարհին»... Մեր շարունակական փնտրտուքների, ելվերումների ու ինքնագտնումի ցուցանումների մեջ, միևնույն է, մնում ենք կիսաճանապարհին, և այս կիսով չափ անցածն է դառնում պոետական ներհայեցում ու ճակատագիր:  
Այդպես և Գոհար Եղիազարյանի բանավեստի խորհուրդն է, որում անապատի ու ծովի ուժեր

կան խեցեպուրծ մարգարիտներ, որոնք, դեռ ափ չհասած, բանաստեղծության այլակերպող ուսմանակով վերածվում են հոգեկանչի, վստահության ու գոհության բառե հմայիլների:  
Հախուռն հոգին չի հագնում նվիրումից: «Ավելի երանելի է տալը, քան առնելը». աստվածաշնչյան այս համոզում-հավատամքն ունի Գոհար Եղիազարյանի գրական կերպարը: Եվ նրա նվիրումի հասուն ողկույզները գորացնում են զավակների սիրտը: Որդին «երակների մեջ անվերջ պտտվող երգ», որի շնորհիվ տաղասաց մայրը խոստովանում է.  
Փրկված են հիմա անսիրությունից, իմ շենշող արև, / Եվ արմատներս ցնծապատար են, երգ են հորինում, / Կուզեի թափվել աշնան բարդու պես տերև առ տերև / Ուտնահետքերիդ, այնտեղ, ուր դու ես, ուր դու ես լինում...  
Ինչքան էլ մայրական սիրո անպարփակության մեջ իր արյան ցուլքն է, ընտանիքը, այնուամենայնիվ հեղինակը հարազատ է մնում սիրով ողողված, կենսաթրփե կնոջ բնատուր էությունը, որը բառավորվելով վերածվում է խոհեղ մաքուր ու նվիրական, ինչպես աղջկական անկեղծ խոստովանություն. «Ինձ ուրացած են քեզ սիրել, սե՛ր իմ: Գոհար Եղիազարյանի ստեղծագործությունները չտրոհվող սիրո ակնածանքի ծնունդ են «Առաքինությամբ այն կնոջ, որ մի, / Լուկ մի սրտի է դողեցրով փարվել իր ամբողջ կյանքում»: Նա երազային շրջապտույտի մեջ է, ուր աշխարհիկը տիեզերանում է. «Դիպչեմ սրտիդ ու լսեմ դողանքը արծաթահնչյուն», ու տիեզերականը՝ դառնում առօրյա. «Քո երկիցներուն տեղ տուր ծափօրոր աղավմիներիս, / Ծիածաններդ թող շոյեն իրենց կտուցով քնքուշ»:  
Գոհար Եղիազարյանը մի առիթով այսպես է բնորոշել բանաստեղծությամբ իրականությունը վերափոխելու իր նպատակը. «Եթե իմ գիրքը դարձի բերի թեկուզ յոթ անառակ որդու ես յոթ «կկու» մոր, ուրեմն իզուր չեմ գրել...»:  
Դարձի բերելու (գուցե և ինքնադարձի) քրիստոնեական այս գաղափարը յուրաքանչյուր բանաստեղծ իր ես-ի ներսում ու նրանից դուրս իրականացնում է յուրովի: Հարցն այն է, թե ով ինչպես: Եղիազարյան բանաստեղծուհին դրան հասնում է չափածոյի տարբեր ձևերով, անգամ սյուժետային նորոտյա բալլադներով ու լեզանդներով, գազել-

ներով, որոնք մի դեպքում քնքուշ հոգու իմաստավորվ կրակ են, մյուս դեպքում, այսպես ասած, փրկավետ անկուն կամ յուրօրինակ դարձ ի շրջանս յուր, և այս ամենը տաղաչափական արվեստի հմուտ կիրարկմամբ, տողի կառուցման տարբեր եղանակներով ու հայերենի նուրբ բառընտրությամբ:  
Սրանով հանդերձ պոետական որոնումների շղթան բաց է, և կիսաճանապարհին հասած բանաստեղծուհին սրտապուրծ երգի մեղմասությամբ որպես կյանքի շարունակության իմաստավորում ավելի ու ավելի է մոտենում իր ակունքներին:  
**Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
\*\*\*  
Թե աշխարհից խռով, խռոված ինձանից՝  
Թափառեն-զգտնեն սեր ու հաշտության հույս,  
Մայրս քնքազորով կծայնի ինձ հեռվից,  
Սրտիս մեջ կվառի անշեջ, ցուլացող լույս:  
Թե փոթորկվի հոգիս օվկիանոսի նման,  
Ինձ իմ ներսից հանի, տանի հեռու-հեռու,  
Մորս ջրհոր աչքից արտասուքը վառման  
Կկաթկթի թաքուն, լուռ և առու-առու...  
Թե բարկանա Բարձրյալն ու նեղանա ինձնից,  
Չլինի փրկության, խաղաղության հնար,  
Մայրս չեչաքարը ծնկների տակ դրած՝  
Կնռանա ցավը, կաղոթի ինձ համար:  
Թե խազեր նկարի կյանքը դեմքիս վրա,  
Հայելու մեջ նայե՞մ-նայեմ, ինձ չի իշեմ,  
Մայրս կհամբուրի, կշոյի ձեռքով խաս,  
Մինչև գտնեմ ես ինձ, ինձ նորից ճանաչեմ:  
Թե մարի հավատս, սերը երազ թվա,  
Ակնամուրը հոգուս քերծված, ճանկբաժ լինի,  
Մայրս՝ սեր ու սփոփանք, սիրո կանթղ անմար,  
Ինքնայրումի բոցով հավատս կվառի...  
Թե իմ դուռը բախի անտես ուրում

մահվան,  
Ասի՛ եկել եմ, տես, որ քեզ ինձ հետ տանեմ,  
Մայրս ոտքի կելնի, թեք կընկնի նրա,  
Մայրս կանեանա, որ ես երկար ապրեմ...  
14.10.2018  
**ՀԱՅՐԻԿԻՍ**  
Յոթ ծով կա իմ մեջ... Ինձ հետ թախծում է լուսինը անքուն, Ալիքներն անվերջ ափ են շարտում խեցիներ սիրո, Որոնք դու՛, դու ես կապույտ ծփանքուն շոյելի թաքուն, Հարստացրել ինձ հին հեքիաթների ոսկի ձկներով:  
Յոթ երկինք ունեմ... Լուսատուները փսփում են, որ Դու ես ինձ համար ճոճանակ կապել աստղերից վառման, Չմոռոխտ թևերով հավքերը այնտեղ երգում են օրոր, Եվ միասին ենք մեկնում գաղտնիքը, խորհուրդն արարմն:  
Յոթ լեռներ ունեմ... Յոթ կատարները ճերմակ ամպից վեր, Հաճախ նստում են ծերպերին նրանց ու պրպտում ինձ, Դու ես լանջերին ցանել ծաղիկների, որ բուրեն հավերժ, Եվ գոր ու գիշեր հսկում ես նրանց չար քամներից:  
Քեզ եմ պարտ, օ՛, քեզ իմ յոթ աշխարհի, գետերի համար, Որոնց հունները դու ես փորել, որ իմ մեջ կարկաչեն, Ի՞նչ անեմ, ՀԱՅՐԻԿ, երբ խենթանում են կարոտից հանկարծ, Ինչպե՞ս սամձեմ, որ ավր չքանդեմ ու չհառաչեմ...  
Հաճախ եմ հոսում ինչպես վարար գետ՝ միայն հասնեմ քեզ, Սիրո լավա է ժայթքում յոթ սարից միաժամանակ, Յոթ երկինքներից սիրո անձրև է մաղում հիմա, տես, ս, Բառերն անզոր են, սիրտը՝ կտրած նուռ, հեռուն՝ սուր դանակ:  
Դու շատ ես սիրում ծովի անթաթման, ծփծփուն լեզուն, Ես՝ լռել քեզ հետ, ճոճվել երազի լուսակերտ գահին, Ես ծովերեն եմ քեզ հետ զրուցել, շշմալ ուզում եմ ծովերեն եմ տեսնում գրկել քեզ անձկության պահին...  
20.02.2022

**ԿԻՍԱՃԱՆԱՊԱՐԴԻՆ**  
Կորցրի ինքս ինձ, ե՞րբ էր, լավ չեմ հիշում, Փնտրտուք է դարձել դեռ չծնված օրը, Մի՞տքն է առաջնորդում, սիրտը ի՞նչ է հուշում, Հիմա մեկ է թվում, նույնն են հիմն ու նորը:  
Գարնան ծաղկունքի մեջ հետքս չկար, չկար, Երեքնուկների մեջ իմ ստվերը տեսա, Ինքս իմ հետևից վազեցի շատ երկար, Մինչև քամին հուշեց, թե խենթ տեսիլ է սա...  
Ամռան արևի տաք շողերում չկայի, Ոչ էլ սարի անուշ, շնկշնկան հովերում, Քնքուշ սմբուկները լոկ օրորվում էին Եվ լռությամբ ասում՝ չկաս այս կողմերում:  
Աշնան հեքիաթներից թռել էի, թռել, Խաշամը խշշում էր բարկ կարտի մասին, Խարտիշափեր փերու ուսին հավքը թառել, Կափկափում էր՝ արի՛, որոնք միասին:  
Ասի՛ գուցե գտնեմ ծմռան ճերմակի՞ մեջ Ու ծյան վրա՞ կարդան ոտնահետքերը իմ, Տեսա՛ սառած գետ կար, որ բաժանում էր մեզ, Մի ափին ես էի, մյուսին՝ ճիշտ կեսը իմ:  
Եվ արդեն յոթ կյանք է՛ ես վազում եմ, վազո՞ւմ, Սակայն ճաք է տալիս սառույցը բարակած, Սառը ջրի մեջ եմ սուզվում իմ երազում, Արթնանում՝ տեսնանքը տեսած ու չգրկած...  
Չարթնում, չեմ ներում ինձ, որ աշխարհը չեղա, Որ միշտ սայթաքում եմ, սայթաքում նույն պահին, Բաց աչքով ապրածն էլ պատրանք, պատրանք եղավ. Սուրում... ու մնում եմ ԿԻՍԱՃԱՆԱՊԱՐԴԻՆ...  
11.01.2022  
Գոհար ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ԱՐԵՎԱՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՆ ԿԵՊԵՆԻՕՂՆՈՒ  
ՊՈՒԼԻՍ-ԹՈՒՐՔԻԱ

## ՓԼՏՈՏՈՒՔ

Մենք մեզի մնացինք  
Եւ մտածեցինք  
Մենք մեր մէջ  
Թէ ի՞նչ էր  
Մեզ բաժնողը ձեզմէ

Դուք ձեզի մնացիք  
Արդեօք բնաւ մտածեցի՞ք  
Դուք ձեր մէջ  
Թէ ներկայ ըլլալու հանգամանքը  
Կը պարտիք մեր բացակայու-  
թեան  
Այդ արդիւրն է որ  
Կը փնտռեն հիմա  
Ձեր շունչը խնայող մեզմէ  
Կոյրի մը պէս բնագոյաբար  
խարխալեցիք  
Ու կը ճանկեն ոչնչութիւնը

Ողիսական մը յարատեւ  
Մշտնջենական  
Ճամբաներ կը մաշեցնեն անխոնջ  
Մկրտուած այս նախնական  
անձեքով

ԹԱՄԱՐ ԳԱՄՊԱՐԵԱՆ  
ԵՐԵՎԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՆՉՆ Ե ԳԱՂՏԻՔՆ

Ի՞նչն է գաղտնիքն այս Հայկային.  
Ձարմացուցեր է աշխարհին,  
Գորշ օրերուն արհաւիրքի

Կարծանանայ դեռ հմայքի:

Ի՞նչն է գաղտնիքն ամբողջին մեր,  
Ոչ երկնահաս շքեղ շէնքեր,  
Ոչ ալ՝ պէս-պէս արդի վայրեր,  
Այլ՝ հնութիւն, հիւրընկալ սեր:

Ի՞նչն է գաղտնիքն տաքուկ  
սիրոյն,  
Կը թափանցէ խորը հոգւոյն,  
Կը կլանէ միտքը իսկոյն,  
Կը պարուրէ սիրտն զգայուն:

Ի՞նչն է գաղտնիքն հպարտ  
հողին,  
Տուն կը կանչէ իր պանդուխտին,  
Որ վայելելով բարիքն այլին.  
Ան կը հիւսէ՝ փառքն Հայկային:

Ի՞նչն է գաղտնիքն իր այդ օդին,  
թափտ սեւ մուխ ու ծուխ հոտի,  
Կը յայտնուի զուլալ ոգին,  
Ուր կը խայտան կեանքն ու  
հոգին:

Ի՞նչն է գաղտնիքն ջրին համով,  
Հայաստանի գետին բոյրով,  
Երբ որ ըմպես, դառնաս զինով,  
Չես յագեցար օտար ջրով:

Ի՞նչն է գաղտնիքն հալեացիին,  
Կըսեն կառչած է անցեալին,  
Կապաւիմի իր բնագոյին  
Ու մարդկային գութ գորովին:

Ի՞նչն է գաղտնիքն մայր գաղու-  
թին,  
Պահապանը մշակոյթին,  
Դէմ յանդիման լուրջ վտանգին  
Թափը կու տայ նոր գարթոնքին:

Ի՞նչն է գաղտնիքն հայ համայն-  
քին,  
Համբերանքին, տոկուն կամքին,  
Յոյսեր տածած նոր գալիքին,  
Կը հաւատայ միշտ հրաշքին:

ԽԱԶԻԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ  
ՊՈՒԼԻՍ-ԹՈՒՐՔԻԱ

ՁՕՆ ՀՈԳԵԿԱՆ

Հոգիս հողանի՝ հողմերուն առջեւ,  
Ահեղ մարտերուն, ոտխիւն առջեւ  
Թեւերս պարզած ակնկոր  
ու լուռ,-  
Հին աստուածներու կրակին  
առջեւ:

Հոգիս ըմբոս է դաւերուն առջեւ,  
Տնորքին, ցաւին, արցունքին առ-  
ջեւ.  
Ողջոյն, հրաբուխ վրէժի ցաւ-  
ման,  
Հոգիս ըմբոս է դարերուն առ-  
ջեւ:

Հոգիս գուսան է սիրոյ փանդիւռով,  
Առասպելական վսեմ երգերով.  
Շառաչող յոյսի շանթով  
արփագուն,-  
Հոգիս երկնքի կապոյտն է անհուն:

Հոգիս սրբատաշ վանքի գմբէթին  
Թառած արծիւն է արեւագալին.  
Հոգիս զօղանքն է մեր արքայա-  
կան  
Կարօտի կանչն է յարատեւու-  
թեան:

Հոգիս տաճար է բոցերով յուրթի՝

Կարօտի անյագ տենչերով յուր-  
թի,  
Երկունքի վսեմ ցուրը աչքերուն՝  
Անհուն եթերի աստղերով յուրթի:

Հոգիս ոսկերոց երկունքին ընծայ,  
Դարաւոր անբիծ մեհեանին  
ընծայ,  
Սիրոյ հրայքով հոգիս  
պարուրուած,  
Հոգիս բուրվառ է աշխարհին  
ընծայ:

«Լուսաբացիս ամպրոպը»  
շարքէն

ԽԱԶԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ  
ՊՈՒԼԻՍ ԱՅՐԵՍ-ԱՐՄԻՆԻԱ

ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆ, ԼՈՒՈՒԹԻՒՆ

Վաւերական ոչինչ  
ըսուածին հարազատ ոչ մէկ բառ  
և կայուն ոչ մէկ իմաստ  
տողանցունի անհաւասար  
կշռոյթին:  
Եւ սակայն խօսքը,  
ամբողջական ու բացարձակ,  
կար:  
Մինչև որ արմատներդ  
տարագիր  
մոռուած օր մը հեռացար:  
Եւ սկսաւ  
այս յաւերժական թափառումը  
լեզուին մէջ:  
Տառապանքը հիմա  
-կը գրես-  
ներկայ է մշտական  
անցեալի մարող արծազանգին

ընդմեջէն:  
ժամանակը այլևս  
բացակայութեանդ հայելին մէջ  
բազմացող պատկերն է  
լքումներուդ,  
և ճակատագիրը՝  
նոյն, միևնոյն տենչանքը՝  
քերթուածին վերջին լուսութեան  
հասնելու:

ԿԱՐՕ ԱՐՍԼԱՆԵԱՆ  
ՔՈՒԷՅԹ

«ԵԹԷ»  
բանաստեղծական հատորի  
շարքէն

Այս երգը երգ չէ, արիւնտ ւերք է,  
Դարաւոր կիրք է եւ արհաւիրք է.  
Այս երգը դէմքդ պոկուած  
ժպիտ է,  
Համբոյրներուդ պէս զուլալ,  
վճիտ է,  
Կարօտիդ պէս բորբ,  
անվերջ թռիչք է:  
Այս երգը թու սրտիդ դռները  
թակող  
Եւ հայեացքներուդ ցուրով  
յագեցող  
Ծարաւ, որբուկ է,  
Այս երգը անցեալէն ապագայ  
վազող  
խենթ արշալոյս է,  
Անխարդախ յոյս է:  
Այս երգը փախչող  
իմ ոտնածայնն է,  
Եւ առանձնութեան սիրտը  
զովացնող  
Մոռուած արցունք,  
Բազմածայն սիրոյ կեանքի  
նոր բարձունք:

## ՎԱՐՂ ԱՐԾԱՓԷ ՈՒԹՈՒՆՉՈՐՍ ԿՏՈՒՑ

-Բեղերով տոտան եկա՛վ...  
բեղերով տոտան... փախե՛ք,-  
կանչում էին բակի փոքրիկները,  
ծիծաղելով վազում ու թաքնվում:  
Բեղերով տոտան՝ Հասոն, սո-  
վորոթիւն դարձած գայրոյթով  
գետնից ճանկում էր պատահած  
բարը, նետուն նրանց կողմը:

Երկար, ճմռթված կիսաշրջագ-  
գեստով էր, զուլավոր ժակետով,  
այդպէս էր հայտնվում անգամ  
ամռանը: Միշտ տխուր էր Հասոն,  
շատ տխուր, բոլորը խուսափում  
էին նրանից: Միակ ապալենը հի-  
վանդ մայրն էր: Մենք նույն մուտ-  
քում էինք ապրում: Մի օր անսպա-  
սելի լսվեց Հասոյի ոռնոցը. մայրն  
էր մահացել: Կանգնել էր Հասոն  
շքամուտքի առաջ, բերանը լայն  
բացած՝ ողբում էր: Փորձեցի սփո-  
փել, ձեռքն անհույս թափ տվեց ու  
գոռաց երեսիս հագիվ հասկանա-  
լի բառերով.  
-Մացեր են, որ ի՞նչ անեն,  
ո՞ւն են պետք, իրա տեղ ես էթա-  
յի էլի՛...  
Հասոն մնաց որբ ու շրջնուկի,  
ասես ստվեր լինէր. մութն ընկնե-  
լուն հետ գլխիկոր թափառում էր  
կիսախավարում՝ անբնական եր-  
կար թևերը տարուբերելով:  
Ձմռան ցուրտ օր էր, հարցրի՛  
չի մրսում, գուցե տո՞ւն գնա:

-Եթիմ են մացեր, տունը դրսից  
ցուրտա, ընչի՞ գնամ,-ժպտաց ու  
անորոշ հայացքով նայեց ինձ:

Առաջին անգամ տեսա երկնքի  
չափ կապույտ աչքերը: Հորդորե-  
ցի գալ ինձ մոտ, երբ ցանկանա:  
Առավոտ շուտ դուռն աղմու-  
կով թակեցին. Հասոն էր՝ ձեռքում  
ծռնոված շյուղեր ու փիրուզա-  
գույն կծիկ:  
-Կտուց կարա՞ս անես, հը՞,-  
հարցրեց փնջացնելով:  
-Կտուց անելը ո՞րն է,-ասա-  
ցի: Շյուղերը մեկնեց ինձ ու ներս  
մտավ:  
Հասոն դարձավ ամենօրյա  
այցելու: Նրա համար կտուց էի  
անում՝ հատեր գցում շյուղին,  
ասում էր, որ ութսունչորսը գցեմ,  
հանկարծ պակաս չլինի, ու հաշ-  
վում էի հատերը, մեկնում նրան:  
ժպտում էր գոհ, գնում, բայց չան-  
ցած մի ժամ վերադառնում էր ու  
նորից կտուց ուզում: Երբ ներս  
էի կանչում, ափերով ծածկում էր  
դէմքն ու ծիծաղում.  
-Վխչի՛, անոթա, չես գա, մի՛  
ասա...  
Մի օր էլ աղջիկս հարցրեց, թե  
ինչո՞ւ են ամեն անգամ ութսուն-  
չորս հատիկ գցում շյուղին, ախր  
միևնույնն է, քանո՞ւն է: Ծիծա-  
ղեցի վրաս, բայց շարունակեցի  
ճշգրտորեն հաշվել հատերը. չէի  
կարող խաբել Հասոյին, չէ՞ որ  
նրա աշխարհն ամենամաքուրն  
էր ինձ ծանոթ աշխարհների

մեջ, չնայած բոլորը խոսում էին,  
որ «անվա է, տգեղ, յանը տա-  
րած...»: Հերթական անգամ, երբ  
բերեց շյուղերը, ասացի.  
-Հաս, ջան, ինչո՞ւ ես բա քան-  
դում հատերը, գործի՛ր էլի:  
-Չե՛մ քանդում,-խեղճացավ  
Հասոն,-ուզում եմ մեկել շյուղին  
փոխեմ, թափվում են,-ու անսպա-  
սելի լաց եղավ:  
Իմ սիրտն էլ լցվեց, քնքշորեն  
շոյեցի ուսը. զարմանալի զգայուն  
էր նա, գրեթե միշտ հայտնվում էր,  
երբ նեղսրտած էի կամ տկար,  
նրան տեսնելով՝ ամբասնում էի.  
Հասոն թուլություն էր և ուժ,  
աշխուժանում էր հատկապէս թո-  
շակ ստանալու օրերին, մտնում  
էր խանութ, գնում ծաղկավոր  
թաշկինակներ ու տղամարդու  
գուլպաներ, հետո փութեռանդ  
տուն էր բերում, ջրի մեջ թաթա-  
խում, շարուն պարանին, իբր  
ինքն էլ կին է ու վազք անել գի-  
տի: Մի օր էլ լիքը ճուտիկներ բե-  
րեց, թե բա՛ տուն-տեղ եմ դնում:  
Պարզվեց, որ Հասոն սիրահար-  
վել է: Ժամերով կանգնում, նա-  
յում էր նրա «Մոսկվիչին», երբեմն  
էլ իբր հոգնած՝ հենվում... Չգի-  
տեմ՝ որտեղից, ծղոտե լայնեզր  
գլխարկ էր ճարել, զուլավոր ժա-  
կետը հանել վրայից ու շարունակ  
քթի տակ նույն երգն էր դնում.  
«Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ  
պէս, մընում էր յարին...»:  
Հասոն ծախրում էր... Սկսեց

ինձ ուշ-ուշ այցելել, ամբողջ օրը  
դրսում էր: Փողոցում հանդիպեցի  
ու ժպիտով ասացի.  
-Հաս, ոնց որ սիրահարվել  
ես... էլ ինձ չես հիշում, չես գալիս,  
հետն էլ շատ սիրունացել ես...  
-Ճաշակո՞ւ բարձրացել,-ինձ  
համար անակնկալ հեզնեց Հա-  
սոն, հետո նեղսրտեց,-ախչի՛, լավ  
չե՛ս... լա՛վ չես... ես քո իմացած  
աղջիկներից չեմ, հա՛,-ու փախավ:  
Մեկ էլ եկավ ծննդյանս օրը՝  
ձեռքերը հետևում պահած, երբ  
հարցրի՛ ի՞նչ է թաքցնում, ժպի-  
տով խոնարհեց գլուխն ու մարմ-  
նով շրջվեց.  
-Ծնունդսա չե՞՞ Խօր, ա՛ռ, քեզ  
են բերել, ոտներդ չսառեն, հագիվ  
կտուցներդ գործեցի... Ես էլ մա-  
գերիդ գույն ա, կքսես:  
Ձեռքերի մեջ գուլպաներ էին,  
փիրուզագույն գուլպաներ և ոս-  
կեփայլ շրթերիկ... Հասոյին այդ-  
քան երջանիկ չէի տեսել, ո՞նց էին  
շողում աչքերը...  
Արցունքս հոսեց դեպի սիրտս.  
Ինչպե՞ս էր իմացել ծննդյանս  
օրը... հետո նստեց անխոս ու լաց  
եղավ.  
-Ճութիս թույներ են, ասի՛  
ծնունդսա, չասեմ, բայց սիրտս  
տրաքվումա, իմ բարին չեն ու-  
զում, սաղ չար են, չար, չեն ուզում  
տուն-տեղ դնեմ, ես աշխարհից  
փրկություն չունեմ, գժվըցնում  
են ընծի... հետո էլ կասեմ՝ Հասոն  
գեժ ա, գեժ... էլի եթիմ մացի...



Այլևս Հասոյին չտեսա: Օրեր  
անց Հասոյի բոթը հասավ. մար-  
մինը գտել են դաշտում՝ արևա-  
խամն...  
Նրան չկարողացա այդպէս  
տեսնել, բայց վերջին պահին  
չդիմացա ու մոտեցա պատու-  
հանիս... Հասոն հեռանում էր...  
Տղան, որ դիմացից տանում էր  
նկարը, անսպասելի թեքվեց, ու  
Հասոյի աչքերը գտան ինձ...  
ժպտում էր. «Փրկվեցի՛...»:  
Նայեցի վերև, երկինքը ողող-  
ված էր Հասոյի աչքերի կապույ-  
տով, իսկ վազքի պարանին  
օրորվում էին ծաղկավոր թաշկի-  
նակները: Գուլպաները չկային...

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող  
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային  
մասնաճյուղը:  
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62  
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.  
հեռ. (094) 53 44 64  
Խմբագրական խորհուրդ  
Գլխավոր խմբագիր՝  
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտրորդո Պրինտ» ՍՊԸ  
Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 1 տպագրական մանուկ